# Պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում հեռավար/առցանց կրթության կազմակերպման և իրականացման վերաբերյալ առցանց հարցման ամփոփ արդյունքներ




Հարցման շրջանակում ստացվել են ընդամենը 4,358 լրացված հարցաթերթիկներ, որոնցից՝ 181-ը, կամ բոլոր լրացված հարցաթերթիկների 4,3%-ը, վերլուծության ընթացքում որակազրկվել են, քանի որ լիարժեք լրացված չեն եղել, կամ չեն համապատասխանել հետազոտության չափանիշներին:

# Հարցմանը մասնակցած ուսուցիչներն՝ ըստ մարզերի




Մասնակից ուսուցիչների՝

- 95.2%-ը՝ իգական սեռի,
- 66,4%-ը՝ 30-49 տարեկան,
- 16,1%-ը՝ մինչև 29
- 17,5%-ը՝ 50-ն անց
- 61,9%-ը՝ քաղաքային
- 38.1%-ը՝ գյուղական

Հարցման մասնակիցների կեսից ավելին՝ 57.8%-ը, 11 տարուց ավելի փորձ ունեցող ուսուցիչներ են:
Մինչև 5 և 6-10 տարվա դասավանդման փորձ ունեցող ուսուցիչների մասնաբաժինը կազմել է համապատասխանաբար՝ 22,7% և 19.5%՝ :

# Հարցմանը մասնակցած տնօրենները




Հարցմանը մասնակցել է բոլոր մարզերի և Երևան քաղաքի ընդամենը 147 տնօրեն: Գյուղ/քաղաք բաշխվածությունը՝ 42.9% և 57.1%

Մինչև 5 տարվա փորձ՝ 40.8%, 40.1%-ը՝ ներկայում դպրոցում որպես տնօրեն աշխատում է 3 տարուց ոչ ավելի

# Վերապատրաստում

- Բրիտանական խորհուրդ
- Դասավանդի՛ր Հայաստան
- Ինտերակտիվ կրթության զարգացման հիմնադրամ
- Իմ դպրոցը
- Քան ակադեմիան
- Արաբական Միացյալ Էմիրությունների Համդան Բին Մուհամմեդ սմարթ համալսարանը



Լուսակարը՝ Պարադիգմա կրթական հիմնադրամի ֆեյսբուքյան էջից

Հարցված ուսուցիչների միայն 35. 2%-ն է նշել, որ անցել է հեռավար ուսուցման վերաբերյալ համապատասխան ***վերապատրաստում*** (663 ուսուցիչ)։ Նրանցից 63.5%-ը նշել է, որ վերապատրաստումները կազմակերպվել են ՀՀ ԿԳՄՍՆ ԿՏԱԿ (Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն) կողմից, իսկ 15,7%-ը նշել է, որ դրանք կազմակերպվել են դպրոցի տնօրինության կողմից։

# Առավել հաճախ օգտագործված առցանց հարթակների վարկանիշը



# Արդարացված էր, թե ոչ անցումը հեռավար/առցանց կրթության



# Դասապրոցեսը հեռավար կազմակերպելու առավելությունները

- ուսուցիչներ
- տնօրեններ
- ծնողներ
- սովորողներ

Նորարարություն, դասավանդման նոր մոտեցումներ և գործիքներ




Ուսուցչի ստեղծագործական ազատություն և ավելի շատ տեղեկատվություն փոխանցելու հնարավորություն




Տարբեր հարթակներ օգտագործելու ճկունություն




Ժամանակի և ռեսուրսների արդյունավետ կառավարում




Սովորողների ակտիվ մասնակցություն և ինքնուրույնության խթանում




Դասավանդման նյութերի, գրքերի մատչելիություն ու հասանելիություն




Երեխաների նկատմամբ անհատական մոտեցում դրսևորելու հնարավորություն



# Դասապրոցեսը հեռավար կազմակերպելու թերությունները

- ուսուցիչներ
- տնօրեններ
- ծնողներ
- սովորողներ

Ինտերնետային կապի անբավարար որակ




Հեռահաղորդակցման տեխնիկական միջոցների բացակայություն/ անբավարար որակ




Ուսուցիչների աշխատանքային ծանրաբեռնված գրաֆիկ՝ առանց համապատասխան ֆինանսական  փոխհատուցման




Ծնողների անհարկի միջամտությունը առցանց/հեռավար դասապրոցեսի ընթացքում




Ուսուցիչների և/կամ սովորողների բնակարանային անհարմարություններ




Հագեցած/խիտ դասացուցակ




Առցանց աշխատանքի համար անհրաժեշտ ոչ բավարար հմտություններ



# Աջակցության գնահատումը



# ԿԱՊԿՈւ երեխաների մասնակցությունը

Learning Knows No Bounds






# ԿԱՊԿՈւ երեխաներ. առաջարկվող լուծումները



# Հանրային հեռուստատեսության դասերը

***Հանրային հեռուստատեսությամբ*** հեռարձակվող հեռուստադասերը արդյունավետ կամ շատ արդյունավետ գնահատել է ծնողների միայն 26.7%-ը: Ծնողների զգալի զանգված՝ 47.8%-ը, նշել է, որ չեն դիտում կամ տեղյակ չեն այդ դասերից: Եվս 19.5%-ը նշել է, որ հեռուստադասերն արդյունավետ չեն: Ըստ տարիքի, սեռի, կրթվածության մակարդակի կամ բնակության վայրի ծնողների պատասխանները հիմնականում չեն տարբերվում և գտնվում են միջին ցուցանիշի միջակայքում:

***Հանրային հեռուստատեսությամբ*** հեռարձակվող հեռուստադասերը արդյունավետ կամ շատ արդյունավետ գնահատել է սովորողների 33.7%-ը, իսկ 49.8%-ը, նշել է, որ չեն դիտում կամ տեղյակ չեն այդ դասերից: Սովորողների 15.2%-ը նշել է, որ հեռուստադասերն արդյունավետ չեն: Գյուղաբնակ սովորողների միայն 38%-ն է նշել, որ տեղյակ չէ և չի նայում հեռուստադասերը, մինչդեռ քաղաքաբնակների շրջանում այս ցուցանիշը կազմում է 54.1%: Համապատասխանաբար, գյուղաբնակների 16.5%-ը շատ արդյունավետ, իսկ 32.2%-ը՝ արդյունավետ է գնահատել Հանրային հեռոստատեսությամբ հեռարձակվող հեռուստադասերը, մինչդեռ քաղաքաբնակ սովորողների նույն ցուցանիշները կազմել են համապատասանաբար 4.9% և 23.2%:

# ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ